ԻՌԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՀՈԳԵԿԱՆԻ ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցական մանկությունը զարգացման յուրահատուկ շրջան է, երբ երեխայի մոտ ձևավորվում է նոր, ավելի հագեցված վերաբերմունք շրջապատող աշխարհի նկատմամբ: Նախադպրոցական տարիքում առաջ են գալիս նոր պատկերացումներ իրական ներքնաշխարհի մասին, որոնք թույլ են տալիս երեխային ներքուստ կառավարել իր վարքը: Այս ամենը կապված է նախադպրոցականի հոգեկանում և գիտակցության մեջ մի շարք նորագոյացությունների առաջացման հետ: Ըստ Լ.Ս. Վիգոտսկու, եթե վաղ տարիքում գլխավոր հոգեկան ֆունկցիան ընկալումն է, ապա նախադպրոցական տարիքում զարգանում է հոգեկան ֆունկցիաների նոր համակարգ, որի կենտրոնում հիշողությունն է: Երեխայի մտածողությունը ակնառու գործնականից վերածվում է ակնառու պատկերավորի: Երեխան կարողանում է իրադարձությունների և երևույթների միջև հաստատել պարզ պատճառահետևանքային հարաբերություններ [1]:

Հինգ տարեկան երեխաների մոտ լուրջ փոփոխություններ են կրում ճանաչողական պահանջմունքները և շարժառիթները: Հիմնականը նոր տպավորություններ ստանալու պահանջմունքն է, որն ապահովում է երեխայի ընդհանուր հոգեկան զարգացումը՝ մտավոր կարողություններով պայմանավորված [5]:

Նախադպրոցական տարիքում երեխայի ինքնահաստատումն ավելի հաճախ դրսևորվում է հետևյալ ձևով. ճանաչում ստանալու կամ ընդունված լինելու չիրականացած ձգտումը հաճախ հանգեցնում է վարքի ոչ ցանկալի ձևերի և երեխան սկսում է հորինել ու ստել: Պատճառն այն է, որ երեխայի կամային ոլորտը բավարար զարգացած չէ արարքների հետևողական կատարման համար: Ստելու պահանջը ծագում է որպես կամային վարքի փոխհատուցում [ 6]:

Ըստ Դ.Բ.Էլկոնինի՝ նախադպրոցական տարիքի հիմնական հոգեբանական նորագոյացություններն են.

1. ամբողջական մանկական աշխարհայացքի ուրվագծի ձևավորումը,
2. առաջնային բարոյական արժեքների առաջացումը,

3. դրդապատճառները դասակարգելու ընդունակությունը,
4. կամային նոր որակները,
5. անձնային գիտակցության ծագումը:

Նախադպրոցական տարիքում երեխայի մոտ առաջանում է շրջապատող աշխարհը ինչ-որ ձևով բացատրելու և դասակարգելու ձգտում: Այս տարիքի կարևոր նորագոյացություններից է երևակայությունը, որը մեծ ընդհանրություն ունի հիշողության հետ և կարելի է դիտել որպես «Վերարտադրող երևակայություն»: Մանկական երևակայության դրսևորման առաջին ձևը խաղն է:

Նախադպրոցական տարիքի վերջում և դպրոցականի սկզբում երեխաների մոտ առաջանում է ճանաչողական պահանջմունքի զարգացման յուրօրինակ փուլ՝ նոր գիտելիքներ և կարողություններ ձեռք բերելու պահանջմունք, որն իրականանում է հասարակական պայմաններում՝ որպես հասարակության համար նշանակալի գործունեություն և երեխայի համար ստեղծում է նոր սոցիալական դիրք: Կամային վարքը վերածվում է նորմերով և կանոններով միջնորդավորված վարքի: Դրվում է սեփական վարքի գիտակցման և անձնական ինքնագիտակցության սկիզբը [2]:

Նախադպրոցական տարիքը բնութագրվում է նաև երեխաների հարցերի բազմազանությամբ: Մեծի և երեխայի այսպիսի համագործակցությունը ստացել է ճանաչողական շփում անվանումը: Այս տարիքում է ծագում նաև շփման մի այլ ձև անձնային շփումը, որը բնութագրվում է նրանով, որ երեխան ակտիվորեն ձգտում է մեծերի հետ քննարկել իր և ուրիշների վարքը բարոյական նորմերի տեսանկյունից:

Երեխայի անձի ձևավորման մեջ կարևոր նշանակություն ունի հասակակիցների հետ շփման պահանջմունքը: Երեխաների միջև կարող են առաջանալ ամենատարբեր փոխհարաբերություններ: Ավագ նախադպրոցական տարիքում համատեղ գործունեության ընթացքում երեխաները յուրացնում են համագործակցության հետևյալ ձևերը համաձայնեցնում են գործողությունները և համատեղ կատարում. վերահսկում են խաղընկերոջը, ուղղում նրա սխալները, օգնում նրան, ընդունում նրա դիտողությունները, ուղղում սեփական սխալները: Համատեղ գործունեության ընթացքում երեխաները ձեռք են բերում ղեկավարելու և ենթարկվելու փորձ [2]:

Բոլոր այս կարևոր նորագոյացությունները ծնվում և զարգանում են այս տարիքի առաջատար գործունեության դերային խաղի մեջ: Խաղն առաջատար է ոչ այն պատճառով, որ ժամանակակից երեխան, որպես կանոն, իր ժամանակի մեծ մասն անց է կացնում խաղալով և համեմատաբար քիչ է ներգրավվում մեծահասակների աշխատանքային գործունեության մեջ, այլ այն պատճառով, որ երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ են առաջացնում: Նրանում սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը, որն առաջատար է դառնում դպրոցական տարիներին [6]:

Նախադպրոցականի հոգեկան զարգացումը իրենից ներկայացնում է գործնական հետաքրքրություն, քանի որ ուղղված է մի շարք կրթական, դաստիարակչական և մանկավարժական խնդիրների լուծմանը, ուսման արդյունավետության հոգեբանական մեխանիզմների բացահայտմանը և կիրառմանը:

Նախադպրոցականի հոգեբանության ուսումնասիրման հիմքում ընկած է Լ.Ս.Վիգոտսկու գիտական դպրոցի կողմից մշակված տեսական կոնցեպցիան, ըստ որի երեխայի հոգեկան զարգացման առանցքն է կազմում նրա գործունեության հաջորդականությունը մեծահասակների հետ հաղորդակցման ընթացքում: Երեխայի կյանքի յուրաքանչյուր ժամանակահատվածին համապատասխանում է գործունեության առանձնահատուկ տիպ, որն էլ ապահովում է տվյալ տարիքում հոգեկանի զարգացումը: Այդ տարիքին բնորոշ է ուսումնական այնպիսի գործունեություն, որի ընթացքում երեխան յուրացնում է դիմացինի մտածողությունը, ուսուցչի կողմից մատուցվող տեսական նյութը: Ասվածը վերաբերվում է սոցիալական ուսուցմանը, երբ երեխան, ստանալով նյութը, յուրացնելով ուսուցման միջոցով դարձնում է այն սեփական գիտելիք: Ձևավորված գիտելիքները հիմքեր են ստեղծում վերացական մտածողության ձևավորման համար: Նման յուրացման ժամանակ նախադպրոցական տարիքից սկսած, երեխաների մոտ առաջանում են ապրումները վերլուծելու և նախագծումներ կատարելու հակումներ, որոնք էլ կանխորոշում են ինչպես երեխայի իմացական գործընթացները, այնպես էլ նրա ողջ հուզական և պահանջմունքային ոլորտներում որակական փոփոխությունները:

Երեխայի համար առանձնակի կարևորվում է պատրաստվածությունը դպրոցին, որը համալիր, բազմակողմանի խնդիր է և ներառում է երեխայի կյանքի բոլոր ոլորտները: Ժամանակակից պայմաններում այն դիտվում է որպես պատրաստվածություն դպրոցական ուսմանը [2]:

Ըստ Լ.Ի. Բոժովիչի՝ պատրաստվածությունը դպրոցին ձևավորվում է մտավոր գործունեության, ճանաչողական հետաքրքրությունների, կամային կարգավորման, դպրոցականի դիրքի (ստատուս) նկատմամբ ճանաչողական գործունեության զարգացման որոշակի մակարդակից:

Դպրոցական ուսուցմանը պատրաստ լինելու պրոբլեմը ներառում է մի քանի ոլորտներ

1. Ֆիզիոլոգիական պատրաստվածություն, որը որոշվում է երեխայի օրգանիզմի հիմնական ֆունկցիոնալ համակարգերի զարգացման մակարդակով և նրա առողջական վիճակով [2]:

2. Սոցիալական պատրաստվածությունը երեխայի պատրաստվածությունն է շփման նոր ձևերին, շրջապատող աշխարհի և սեփական անձի նկատմամբ նոր վերաբերմունքին, որը պայմանավորված է դպրոցական ուսուց-

ման իրավիճակով: Կարևոր է նաև անձնային պատրաստվածությունը, որն առաջին հերթին դրսևորվում է դպրոցի նկատմամբ հետաքրքրության մեջ [4]:

3. Հոգեբանական պատրաստվածությունը դպրոցական ուսուցմանը երեխայի հնարավորությունն է յուրացնելու մշակույթի որոշակի մասը, որը ներառված է ուսուցման բովանդակության, ուսումնական գործունեության ձևի մեջ: Այն բարդ կառուցվածքային գոյացություն է, որը ներառում է մանկան հոգեկանի բոլոր կողմերը՝ անձնային-դրդապատճառային և կամային ոլորտները, ընդհանրացված գիտելիքների և պատկերացումների տարրական համակարգերը, հուզական առանձնահատկությունները, որոշ ուսումնական հմտություններ, ընդունակություններ և այլն: Սա ոչ թե մեկուսացված հոգեկան որակների և հատկությունների գումարն է, այլ դրանց ամբողջական միասնությունը, որն ունի որոշակի կառուցվածք [1, 3]:

Նախադպրոցական տարիքի գիտելիքների հիմքով պայմանավորվում է դպրոցականի հետագա ուսուցման լիարժեքությունը և բարձր առաջադիմությունը: Ուստի, այդ հարցի կարևորությունը մեծապես որոշվում է նրանով, թե որ մեթոդիկայով է իրականացվում ուսուցումը նախադպրոցականների և կրտսեր դպրոցականների մոտ: Ավանդական մեթոդիկաները, որոնք լիովին չեն բավարարում կրթական ներկա պահանջներին, շարունակում են մնալ կիրառելի, սակայն բարեփոխումների այս շրջանում նախապատվությունը տրվում է ոչ ավանդական մեթոդիկաներին, որոնց շարքում հարկ է նշել նոր փորձարարությունը՝ կապված երեխաների կրթության և հոգեկանի զարգացման նպատակաուղղված կազմակերպման հետ: Նման փորձարարական մեթոդը փաստորեն զարգացման և կրթման օրգանական միասնություն է: Եթե երեխայի ուսումնառությունը նախադպրոցական տարիքում պատշաճ կազմակերպվի, ապա հետագայում դպրոցականի ստեղծագործական մտածողության ձևավորումը կբավարարի տարիքային պահանջներին:

Նախադպրոցականները չեն ստեղծում հասկացություններ, կերպարներ, արժեքներ և նորմեր, այլ ընդամենը յուրացնում են դրանք ուսումնառության միջոցով: Սակայն նրանք վերարտադրում են հասկացությունների, կերպարների, արժեքների և նորմերի ստեղծման իրական գործընթացը:

Ոչ ավանդական մեթոդի էությունը նրանում է, որ նախադպրոցականը հաղորդակից է դառնում գիտելիքի պատմությանը, այսինքն ինչպես է այն ծագել և զարգացել: Գիտելիքների յուրացման նշված ճանապարհն ունի երկու հատկանշական գիծ: Առաջինը դպրոցականների մտածողությունը նպատակաուղղված անցնում է ընդհանուրից դեպի մասնավորը: Երկրորդը նման յուրացումը ուղղված է յուրացվող նյութի առարկայական բովանդակության ծագումը բացահայտելուն:

Նախադպրոցականների և կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության կայացման ընթացքում ձևավորվում և զարգանում է տվյալ

տարիքին հատուկ ինքնուրույն վերլուծություններ կատարելու հակումը, որը հիմք է մտածողության և ընդունակությունների հետագա արդյունավետ զարգացմանը, այսինքն իրական զարգացումից անցում է կատարվում դեպի ինտենսիվ զարգացում: Տեսական գիտելիքների յուրացմանը զուգընթաց երեխան, դուրս գալով մանկական կենսակերպի սահմաններից, անցնում է հասարակայնորեն նշանակալից ուսումնական գործունեության: Տեսական գիտելիքների յուրացմանը նպաստող համապատասխան հոգեբանական նախադրյալներ ստեղծելու հետ մեկտեղ հարկ է ուշադրություն հատկացնել էմպիրիկ մտածողությանը և վերլուծական միջոցներին, երբ ուսումնական խնդիրները լուծվում են ուսումնական գործողություններ կատարելու միջոցով: Այդ գործողությունները հետևյալն են

— խնդրի պայմանների վերափոխում՝ ուսումնասիրվող օբյեկտի համընդհանուր հարաբերությունը բացահայտելու նպատակով.
— առարկայական, գրաֆիկական, կամ տառային տեսքով առանձնացված հարաբերության մոդելավորում
— մոդելների վերափոխում
— ընդհանուր կարգով լուծվող մասնավոր խնդիրների համակարգի կառուցում
— նախորդ գործողությունների կատարման հսկողություն
— ընդհանուր մեթոդի յուրացման գնահատումը որպես ուսումնական գործունեության արդյունք:

Նշված գործողություններից յուրաքանչյուրը բաղկացած է համապատասխան օպերացիաներից, որոնց համադումը փոփոխվում է այս կամ այն ուսումնական խնդրի մեջ մտնող կոնկրետ պայմանների թելադրանքով: Հայտնի է, որ գործողությունը համադրվում է խնդրի նպատակին, իսկ նրա օպերացիաները պայմաններին: Բնական է, որ գիտելիքների ձեռքբերման սկզբնական շրջանում դպրոցականները ինքնուրույն չեն կարողանում իրենց առջև ուսումնական խնդիրներ դնել և դրանց իրականացման ուղղությամբ կատարել գործողություններ: Որոշ ժամանակ երեխաներին օգնության է գալիս մանկավարժը, որի շնորհիվ նրանք աստիճանաբար ձեռք են բերում համապատասխան հմտություններ: Հենց այդ գործընթացում ձևավորում է սովորել կարողանալու հմտությունը, այսինքն ձևավորվում է ինքնուրույն ուսումնառության հմտությունը:

Հոգեբանության մեջ բացահայտված և նկարագրված են ուսումնական գործողությունների մեկնարկային ձևերի որոշ էական առանձնահատկություններ: Արդեն կատարված են մանկավարժի և նախադպրոցականի առաջին քայլերը համատեղ ուսումնական գործողությունների ուղղությամբ, ինչը հիմք է

ծառայում կազմակերպելու հետագա ուսուցումը նոր, ոչ ավանդական մեթոդներով: Եվ եթե ուսումնական նյութի բովանդակությունը կազմում են տեսական գիտելիքները, ապա դրանց կառուցման եղանակները պետք է ենթարկվեն սոցիալ-հոգեբանական պահանջների: Գիտելիքների մատուցման պրոցեսում անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի անձը, ցուցաբերել անհատական մոտեցում, ուսուցման համար նպաստավոր միջավայրում ապահովել ներդաշնակ զարգացմանը խթանող ակտիվ ուսուցում: Առանձնացնենք նաև գիտելիքների մատուցման այն հիմնական պահանջը, որ ընդհանուր և վերացական բնույթի գիտելիքների յուրացումը պետք է նախորդի ավելի մասնավոր և կոնկրետ գիտելիքների յուրացմանը:

## Գրականության ցանկ


1. Выготский Л.С. Сб.сочинений, т. 2,4,5, М., 1982
2. Кулагина И.Ю., Колюцкий В.Н., Возрастная психология. Полный жизненный цикл развития человека., М.,2006
3. Немов Р.С. Психология, том 3., М., 2003
4. Нижегородцева Н.В., Шадриков В.Д., Психологическая готовность ребенка к школе., М.,2001
5. Обухова Л.Ф. Возрастная психология., М.2007
6. Эльконин Д.Я. Психология игры. М., 1989